

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 20 » մարտ 2023թ. No 1396 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/841-23 առ 16.03.2023թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 3 դեղը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝
 - 1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:
3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Բաղդյանին՝
 - 1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի

Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:


2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Invalid signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

**Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու
ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ**

| h | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | Եզրակացության համար (ԵԱՏՀ հայտի համար) և ամսաթիվ |
|----|---------------------|---|------------------------------------|---|--|-----------|--|---------|-------------------------|--|
| 1. | Դիաբետոն ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբագատմամբ | 60մգ; (28/2x14/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում | ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպոլսկոյե, Մոսկվա | Ռուսաստան | Լես Լաբորատորիես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեղեքս | Ֆրանսիա | Դ | 21231 (000531) 15.03.2023 |
| 2. | Դիաբետոն ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբագատմամբ | 60մգ; (28/2x14/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում, (30/1x30/) բլիստերում, (60/2x30/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում | ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպոլսկոյե, Մոսկվա- փաթեթավորող, բաց թողնման հսկող, Լես Լաբորատորիես Սերվիե Ինդուստրի, 905, Սարան ճ., 45520 Ժիլի, Ֆրանսիա-բալք արտադրող, որակի հսկող | Ռուսաստան | Լես Լաբորատորիես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեղեքս | Ֆրանսիա | Դ | 21232 (000531) 15.03.2023 |
| 3. | Դիաբետոն ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբագատմամբ | 60մգ; (30/1x30/) բլիստերում, (60/2x30/) բլիստերում | Լես Լաբորատորիես Սերվիե Ինդուստրի, 905, Սարան ճ., 45520 Ժիլի | Ֆրանսիա | Լես Լաբորատորիես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեղեքս | Ֆրանսիա | Դ | 21233 (000531) 15.03.2023 |